



ՀՀ պաշտպանության նախարարություն

Տեխնոլոգիական վաշտում զինվորական ծառայության նշանակման նպատակով
ընտրության քննության ամփոփ ուղեցույց

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2019 թ. քննաշրջանի համար

«Տրամաբանություն» առարկայի քննաթերթիկի կառուցվածք

Քննաթերթիկը ներառում է 35 հատ ընտրովի պատասխանով հարցեր՝ 20 հատ 2 միավորանոց հարց, 15 հատ 4 միավորանոց: Հարցերի միավորների ընդհանուր քանակը 100 է: Յուրաքանչյուր հարց ունի պատասխանի 5 տարբերակ՝ **A, B, C, D** և **E**: Մասնակիցն ընտրում է այն պատասխանը, որը համարում է ճիշտ և նշում այն պատասխանների թերթիկում:

Քննության տևողությունը՝ **2 ժամ 30 րոպե**:

«Տրամաբանություն» առարկայի քննաթերթիկի նկարագրություն

Ընտրովի պատասխանով հարցերը հիմնականում կազմված են «Ինտելեկտի գործակից» (IQ) թեստերի, միջազգային դպրոցական «Կենգուրու» մրցույթի և տրամաբանություն և մաթեմատիկական գիտելիքներ (միջնակարգ կրթության մակարդակ) ստուգող նմանօրինակ այլ առաջադրանքների ձևաչափով:

Քննության ժամանակ տրամադրվող նյութեր

Յուրաքանչյուր մասնակցի տրամադրվում է մեկ հատ քննաթերթիկ, մեկ հատ պատասխանների թերթիկ և սևագրության թղթեր: Տրամադրվող նյութերի վրա անուն-ազգանուն գրելն **արգելվում է**: Նույնականացման նպատակով յուրաքանչյուր մասնակցի կտրամադրվի գծակոդ, որը պետք է փակցնել պատասխանների թերթիկի համապատասխան մասում: Ճիշտ պատասխանները պետք է նշել **միայն** պատասխանների թերթիկում (նմուշը տե՛ս հավելված 1-ում): Քննաթերթիկում կամ սևագրության թղթերում նշված պատասխանները ստուգման կամ գնահատման ենթակա չեն:

Չարտոնված նյութեր

Մասնակիցները քննասենյակ կարող են տանել միայն գրիչ և պարզ էլեկտրոնային հաշվիչ (գիտական կամ WiFi միացում ունեցող հաշվիչների օգտագործումն արգելվում է):

Մասնակիցներին արգելվում է քննասենյակ տանել այնպիսի նյութեր կամ առարկաներ, որոնք կարող են տեղեկույթ պարունակել կամ տեղեկույթը կարող են հասանելի դարձնել:

Քննասենյակում չարտոնված նյութեր ունենալը կանոնների կոպիտ խախտում է և կարող է հանգեցնել քննության արդյունքների չեղարկման:

Չարտոնված նյութերի ցանկ

- բջջային հեռախոսներ
- տեղեկույթ պարունակող թերթիկներ
- պայուսակներ
- ցանկացած փաթեթավորում, որի վրա կլինեն պատկերներ կամ տեքստեր (մասնակիցները պետք է ուտելիքը, ըմպելիքը, մարտկոցները կամ այլ առարկաներ տեղադրեն թափանցիկ պարզ փաթեթների մեջ)
- որևէ տեսակի համակարգիչ
- էլեկտրոնային կամ ռադիո հաղորդակցության միջոցներ
- ձայնագրման սարքեր
- էլեկտրոնային ընթերցանության նյութեր

- ցանկացած էլեկտրոնային սարքավորում, որն արտաքին հաղորդակցության կամ տեղեկությունների պահպանման ու վերարտադրման հնարավորություն է ընձեռում
- լուսանկարչական սարքեր
- ականջակալներ
- դյուրակիր երաժշտական նվագարկիչներ

Սույն ցուցակը չի ներառում այն բոլոր նյութերը, որոնք կարող են համարվել «չարտոնված»: Կենտրոնի ղեկավարն ու վերահսկիչները կարող են «չարտոնված» համարել ցանկացած այլ առարկա, եթե դա կարող է քննասենյակում գտնվող մասնակցի համար ծառայել որպես տեղեկույթը թաքցնելու կամ ստանալու միջոց:

Բոլոր էլեկտրոնային սարքերը, ներառյալ բջջային հեռախոսները, ականջակալներն ու խելացի ժամացույցները, անջատված վիճակում դրվում են քննասենյակից դուրս:

Կանոնների խախտումը կարող է հանգեցնել մասնակցի որակագրկման:

Քննության ընթացք

Քննությանը պետք է ներկայանալ քննությունից առնվազն 30 րոպե շուտ, անձը հաստատող փաստաթղթով:

Ներկա-բացակայի գրանցամատյանում վերահսկիչների կողմից հաշվառվում են քննությունը հանձնելու համար գրանցված բոլոր մասնակիցները, ստուգվում անձը հաստատող փաստաթղթերը, տրամադրվում են նույնականացման համար նախատեսված գծակոդերը:

Քննության սկզբում վերահսկիչները մասնակիցների համար կարդում են քննության հրահանգները:

Քննության ընթացքում հարցերի դեպքում մասնակիցը ձեռք է բարձրացնում և սպասում վերահսկիչի մոտենալուն: Քննասենյակից կարելի է դուրս գալ միայն վերահսկիչի ուղեկցությամբ:

Քննության ավարտին հինգ րոպե մնալու պահին վերահսկիչները մասնակիցներին զգուշացնում են այդ մասին:

Քննության ավարտից հետո մասնակիցները պետք է անմիջապես դադարեցնեն գրելը և հավաքեն ու հանձնեն բոլոր նյութերը:

Արդյունքների վերանայում և միավորների վերահաշվարկ

Արդյունքների հրապարակումից հետո 24 ժամվա ընթացքում մասնակիցները կարող են համապատասխան դիմում ներկայացնել աշխատանքի վերանայման և միավորների վերահաշվարկի խնդրանքով: Բողոքարկման դիմումների ընդունման ժամկետի ավարտին հաջորդող օրը մասնակցի ներկայությամբ կազմակերպվում է աշխատանքի կրկնակի ստուգում: Կրկնակի ստուգման ավարտից հետո հրապարակվում են վերջնական արդյունքները:

Վերջնական արդյունքները որևէ կերպ **բողոքարկման ենթակա չեն**:

Հավելված 1. Պատասխանների թերթիկի նմուշ



ՀՀ պաշտպանության նախարարություն

Տեխնոլոգիական վաշտում զինվորական ծառայության նշանակման
նպատակով ընտրության քննություն

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2019 թ., հունվար

Պատասխանների թերթիկ

ՆԱԽ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՑՑԸ

ԳԾԱԿՈՂԻ ՎՐԱ **ԶԳՐԵԼ:**


Բոլոր պատասխանները նշել միայն պատասխանների այս թերթիկի վրա:

Յուրաքանչյուր հարց ունի պատասխանի հինգ տարբերակ՝ **A, B, C, D** և **E**:

Ընտրել այն պատասխանը, որը համարում եք ճիշտ, և նշել այն խաչաձև նշումով:

Միակ պատասխանի համար միավոր չի հանվում:

Պատասխանների թերթիկ



Ցուցումներ

Գրել գրիչով

Ցուրաքանչյուր պատասխան նշել մեկ խաչաձև նշանով:

Օրինակ՝

Էթե 1-ին հարցի համար B-ն ճիշտ պատասխանն է, ապա պատասխանների թերթիկում նշել դա հետևյալ կերպ.

	A	B	C	D	E
1		X			

Համոզվել, որ պատասխանը նշված է համապատասխան հարցի դիմաց:

Ջնջել այն պատասխանները, որոնք անհրաժեշտ է փոխել:

	A	B	C	D	E
1		X		X	

	A	B	C	D	E
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10					
11					
12					
13					
14					
15					
16					
17					
18					
19					
20					

	A	B	C	D	E
21					
22					
23					
24					
25					
26					
27					
28					
29					
30					
31					
32					
33					
34					
35					

Քննողի համար	
Ընդամենը	